ՆՈՐ-ԴԱՐ

№ 105 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ 1 Յուլիսի 1888 Ուրբաթ 1 Յուլիսի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 105

Տարեկան 10 ռուբլի, վեց ամսով՝ 6 ռուբլի, երեք ամսով՝ 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 ր. 50 կ., դառնով 5 կոպեկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում վճարելի համարյա բոլոր գիւղատնտեսական բնկերութիւնների մօտ։

Խմբագրութիւնն հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տոն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն ժամ։
Յայտարարութիւնների գինը 2 կ., բնակիչների համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Լուրեր։ Խնայողական Գանձարան։ Մատենաթօռական ակնարկ (շարունակ.)։ Իմ շերամապահութեան հետաքրքիր (վերջ)։ Ենայից Աւէտարանդրապոլ (շարունակ.)։ Նամակ խմբագրին (երկու հատ)։
Թղթակցութիւններ. — Բաշքեանդ։
Քաղաքական. — Քաղաքական լուրեր։
Խառն Լուրեր։
«Նոր-Դար»-ի հետաքրքիրներ։
«Նոր-Դար»-ի պատասխաններ։
Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Նախընթաց համարներից մէկի Ճակատին տպած մահացուցակից ընթերցողը իմացաւ, որ Փետրուարում վախճանուել էր Թիֆլիսին արդէն ծանօթ Նիկողայոս Տէր-Յակոբեանը։

Հանգուցեալի մասին մենք ոչինչ չգրեցինք, որովհետև նրա մահացուցակը հրատարակելուց առաջ արդէն ստացել էինք այնպիսի ցաւալի տեղեկութիւններ, որոնք մեզ առժամանակ լռել էին պարտաւորեցնում։

Այդ տեղեկութիւնները ստուգելու համար տպաստում էինք Փրանսիական մի քանի լրագրերը։ Ֆրանսիական մի քանի լրագրերը հանգուցեալ Նիկողայոս Տէր-Յակոբեանի մահուան մասին այնպիսի տեղեկութիւններ են հաղորդում, որ մեզ մեծ ցաւ են պատճառում և գիտենք, որ նրա հարազատ եղբօր և մօտիկ ազգականների սրտերը խորը պիտի խոցոտուին։ Հանգուցեալը իւր կեանքը կինքում է ապանութիւնով և անձնասպանութիւնով։

Հանգուցեալ Նիկողայոս Տէր-Յակոբեանը տարել էր իւր հետ Ֆրանսիա իւր եղբօր դստեր փոքրիկ աղջիկը, որի վրայ նա այնքան խնամք ունէր, բժշկելու համար։ Ֆրանսիական Թերթերից իմանում ենք, որ հանգուցեալը Պարիզ հասնելով արձակում է Թիֆլիսից իւր հետ գնացող անգլիացի դաստիարակչուհուն և վարձելով մի ապահին մնակում է փոքրիկ աղջկայ հետ Բուլօն քաղաքը և նրա մօտ մի փոքրիկ քաղաքում բնակարան է վարձում։ Այդ բնակարանի տէրը և ապահինը նկատում են, որ հանգուցեալը շատ մտածմունքի մէջ է։ Հանգուցեալը այդ ապահինն էլ արձակում է և մի օր—Թէօտուսէթեան օրը—գնում է չուխայ և այնքան շատ Ծաղիկներ է առնում և բերում իւր բնակարանը, որ տանտէրը զարմանում է։ Այդ օրը նա փոքրիկ աղջնակի երկու գնդակի հարուածով սպանում է իւր հարազատի փոքրիկ անմեղ աղջկան, լուանում է նրա վէրքերը, պարկեցնում է փոքրիկի դիակը սեղանի վրայ և նրա շուրջը ծածկում է գեղեցիկ ծաղիկներով և այնուհետև մեծ ատրճանակի մի գնդակով վերջ է տալիս իւր կեանքին և ընկնում սենեակի յատակի վրայ փոքրիկ աղջկայ դիակը կրող սեղանի մօտ։ Այդ տխուր և սոսկալի տեսարանն է ներկայանում քննչին և ոստիկանութեան, երբ սրանք ներս են մտնում հանգուցեալ Նիկողայոս Տէր-Յակոբեանի բնակարանը։

Այս երևոյթի, կրկնակի սպանութեան պատճառն ինչ է. արդեօք խելագարութիւնից է...

Սպասենք և տեսնենք, թէ Ֆրանսիական մամուլը ինչ նոր մանրամասնութիւններ է հաղորդում այդ տխուր եղելութեան մասին։

Ո՛րքէր թէ այդ կրկնակի սպանութիւնը խելագարութեան, հոգեկան հիւանդութեան հետևանք լինէր և... չհայտառակէր հայ անունը աշխարհի առաջ։

ՂԱԶԱԽԻՑ.—Ցայտնի աւազակապետ Քեարամ Խակեանդար օղլին կրկին երևաց Ղազախում. նա իւր խմբով շրջում է Դիլիջանի սահերում, ուր քոչել են և գիւղացիները, որոնք վախից վերադառնում են տուն։ Յունիսի 26-ին Քեարամը գործից իւր առաջին քաջագործութիւնը և սպանից յայտնի հարուստ Աղայար Ղուրբան Մուրադին։ Տեղւոյն ոստիկանութիւնն տաքի վրայ է աւազակապետին կալանաւորելու համար, նոյնպէս էչմիածնի, Բորչալուի և շրջակայ տեղերի իշխանութիւնները ոտքի վրայ են։

ՂԶԼԱՐԻՑ հետագրում են կովկասի Գիւղատնտեսական Ընկերութեան. «Ղզլարի և շրջակայքի այգիները սաստիկ ենթարկուած են մի ինչ-որ հիւանդութեան, որ դեռ չէ եղել այտեղ։ Տերևները թափվում են, խաղողը նոյնպէս, ընձիւղներն էլ վարսկուած են։ Հիւանդութիւնը մօտերքս միայն երևաց, մինչդեռ մի քանի այգիները տխուր պատկեր են ներկայացնում։

ԵՐԵՒԱՆԻՑ.—Ջնայելով այնքան անքնչհսյ՝ստեպացող անձրևներին, դաձեալ երևանցիները անտանելի չոգի և փոշու ձեռքից ազատուած չեն։ Սաբսափելի չոգեր է լինում, որին դիմադրելը Երևանում անկարելի է։ Այդ է պատճառ, որ Երևանը դատարկվում է իւր բնակիչների մեծ ամանութիւնից. բնակիչների աւելի հարուստ դասակարգը գնում է ամարանոց, իսկ միւսները գնում են գիւղեր։ Երևանի դատարկուելուն աւելի նպաստեց արտոնական պետանատների հեռանալն երկից ծառայողներով, ամարանոց։ Երևանում մնացել է միջին և սոսկին դասակարգը, որի այժմից վեր լինելով աւելորդ ծախս անելն և ամարանոց գնալը, ակամայ ստիպուած է անտանելի չոգի մէջ ապրել։ Աներևակայելի չոգի հետ միահաւասար մըցում է և անտանելի փոշին։ Երեկոյեան բարձրացող մեղմ հեւսքային քամին եթէ մի կողմից փոքր ինչ զովութիւն է պարգևում, միւս կողմից փոշու ահագին կոյտերը բարձրացնելով լցնում է մարդոց աչքն ու բերանը։ Թէ որքան վնասներ կարող է առաջացնել փոշին, այդ պարզ է։ Թէև քաղաքային վարչութիւնը փոշու առաջն առնելու համար օրեկան երկու անգամ տակառներով ջուր է սրսկել տալիս, բայց հազիւ թէ դա օգնէ փոշու վնասակար հետևանքի առաջն առնելու, որովհետև չորս տակառը շատ քիչ է, այն էլ փողոցների մի քանի յայտնի մասերն է միայն սրսկել տալիս։ Մեր համեստ առաջարկութիւնը յարգելի վարչութեանը այն կը լինէր, որ քաղ. վարչութիւնը ստիպէր բնակիչներին, որ իւրաքանչիւրը իւր տանուքի և տան առաջ ջուր սրսկէր, որով գէթ փոքր ինչ ապատուած կ'լինէինք չոգի և փոշու վնասակար հետևանքից։

Տարօրինակ չոգերի շնորհիւ երևանի նահանգի մի քանի տեղերում արգէն կալը սկսուել է, իսկ հունձը շատ տեղերում վերջացել է։ Ինչպէս պատմում էին, այս տարի առաստղական առատութիւն կ'լինէր՝ եթէ վաղահաս պատուհասները տեղի չունենային. իսկ այժմ շատ տեղերում բացի այն, որ առատութիւն չէ լինելու, այլ մինչև անգամ զգալի կ'լինի հացի սակաւութիւնը։

Խեղճ գիւղացին գոնէ այս տարի սպասում էր առատ հունձի, որով իւր օձիքը թափէր վաշխառուի ձեռքից, բայց անգութ բնութիւնն իւր քմահաճոյքին զոհ գարձրեց գիւղացու յոյսը և գիւղացին մնաց գարձեալ ձեռքերը ծոցին, չինքը ծառած, գատարկ յուսով։

ԲԱԳՈՒԻՑ.—Այսօր, յունիսի 29-ին, տեղիս երկաթուղու կայարանում մի ոմն, Ռոտինեանց ազգանունով աստրախանակով անձնասպանութիւն գործեց։ Բանը նրանումն է, որ նրա լուցկու գործարանում անցեալ տարի, գործարանի պահապանի օրովին, 15 տարեկան մի պատանի, անզգուշութեամբ ընկնում է ատամնատը և նրան տակ և սպանվում է։ Հաշտարար դատաւորը քննելով գործը, երեքշաբթի, յունիսի 28-ին յայտնեց որոշումը՝—Գ. Տ.—Պատուբանին ճանաչել մեղաւոր՝ որ նա զգուշութեան միջոցները չէր գործ դրել, ուստի նրան դատապարտել 2 շաբաթուայ բանտարկութեան և յանձնել հայադատան հոգևորականութեան՝ նրան եկեղեցական ապաշխարանքի ենթարկելու համար, իսկ դատաստանական ծախսերն էլ՝ 25 ր., պահանջել նրանից, գործարանի պահապանի պահանջը վարձատրութեան մասին՝ մերժուած է։

Կայսերական գիւղատնտեսական ընկերութիւնն մօտերքս դիմել է կովկասի Գիւղատնտեսական Ընկերութեան առաջարկելով քննել այն խընդիրը, թէ արդեօք կարելւոր չէ մի պարբերական այնպիսի Թերթ հրատարակել, որ կապէր միմեանց հետ բոլոր գիւղատնտեսական բնկերութիւնները և թէ ինչ միջոցներով կարելի է այդ։

Անցեալ շաբաթ, վաղօրնջուվի փողոցում, ձիաքաշ երկաթուղու տակովն է լինում խան-Բալրամ օղլու երկու տարեկան աղջկիկը։ Ոստիկանութիւնն այդ մասին անմիջապէս կազմում է արձանագրութիւն։ Ձիաքաշի վարչութիւնը, ինչպէս հաղորդում է «Тиф. Лист.»-ը, ազնկայ ծնողներին տուել է 100 ռուբլի և գործն էլ դրանով խափանել։

Թիֆլիսցի Աղայի Տէր Միքայէլեան Սիմէօնեանցը նուիրել է ս. Սարգիս եկեղեցուն մի հատ յախճապակեայ մեծադիր ջահ 160 ռուբլու արժողութեամբ։

Դերասան պ. Տէր-Գաբրիէանցը գերասանական խմբի մասնակցութեամբ «Ցերօպա» այգում, կիրակի, յուլիսի 3-ին սիրտ ներկայացնէ ս. «Բարեկենդան» կօմեդիան երկու գործողութեամբ. ր. Աբրեցով Սէյէ Գաբրին»։ Անարատներում կ'երգէ պ. Արտաշէս Յակոբեանը։

Թիֆլիսի շուկայում և խանութներում և ման ածելով վաճառուող ուտելիքեղէնների գները սոյն 1888 թ. յուլիսի 1-ից մինչև օգոստոսի 1-ը հետևեալն են.—Թխած հաց—սպիտակ ալիւրից 1 ֆունտը 5 կ., ցորենի ալիւրից 1-ին տեսակի 1 ֆ. 3 կ., 2-րդ տեսակի 1 ֆ. 2½ կոպէկ։ Նոյն ալիւրից Թոնրում թխած 1-ին տեսակի 1 ֆ. 5 կ., 2-րդ տեսակի 1 ֆ. 3½ կ., 3-րդ տեսակի 1 ֆ. 3 կոպէկ։ Սպիտակ և ցորենի ալիւրի խառնուրդով թխած (դժուարիս-մաթիս) լաւագի 1-ին տեսակի 1 ֆ. 5 կ., 2-րդ տեսակի 1 ֆ. 4 կոպէկ։ Տաւարի մսի 1-ին տեսակի 1 ֆ. 8 կ., 2-րդ տեսակի 1 ֆ. 7 կոպէկ։ Սուկի 1 ֆ. 14 կոպէկ։ Ոչխարի մսի 1 ֆ. 8 կոպէկ։ Այս գները չեն վերաբերում գիւղից մթերքները բերողներին, որոնք վաճառահանում են Թիֆլիսի հրապարակներում և վաճառանոցներում։

Այսօր, ուրբաթ, յուլիսի 1-ից, պետական բանկի բոլոր ճիւղերում բացվում են խնայողական գարձարաններ։ Որպէս զի մեզնից տանք հասարակութեան ծանօթանալու այդ գանձարանների կազմութեան և նրա նպատակների հետ, մենք սոյն համարում հրատարակում ենք մի քանի ծանօթութիւններ, եթէ ընթերցողներն կը ցանկանան խնայողական գանձարանի հետ գործ ունենալ։ Այդ տեղեկութիւնները հրատարակուած են առանձին թղթի վրայ ժողովրդի համար։

«Նոր-Դար»-ի բաժանորդներից նրբանք, որոնք մինչև յուլիսի 1-ն բաժանորդ են գրուել, թող շտապեն լրենց բաժանորդագրութիւնը վերանորոգելու, եթէ կամենում են մինչև տարուայ վերջը ստանալ լրագրի համարները։

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԱՆ

Խնայողական գանձարանները հիմնուած են նրա համար, որպէս զի ամեն գաստակարգի չքաւոր ժողովրդից հնարաւորութիւն և ամենատպահով միջոց տրուի ազագայի համար փողի փոքրիկ խնայողութիւն անելու երենց անհրաժեշտ ծախսերի մնացորդներով։ Այդ մնացորդների ընտանեկան կենցաղի մէջ շատ անգամ մսխվում են առանց մի որևէ իսկ առանձին կարիքի, բայց եթէ գրանք, օրքան էլ չընչին չլինէին, խնայողական գանձարան տրուէին գումարաւելով, այն ժամանակ այդ չնչին գումարներից աննկատելի կերպով կարող է առաջանալ բաւական նշանաւոր գումար, որ ոչ միայն ազատ կը մնայ անմիտ գործածութիւնից, կորուստից, յափշտակութիւնից կամ հրդեհից, այլ և տոկոս կը բերէ, իսկ գումարատերը տկարութեան կամ անգործ մնալու միջոցին էլ, նրան միջոց կը տայ առանց ուրիշի օգնութեան դիմելու՝ իւր սեփհական միջոցներով կառավարուելու։

Փողը գանձարան տալու կամ գանձարանից առանալու համար խիստ քիչ ժամանակ է հարկաւոր, նոյնպէս և անգրագէտ մարդի համար էլ նոյնքան հեշտ է այդ բանն, ինչպէս և գրագէտի համար.—առաջին անգամ փող բերողի անուն-ազգանունը գրում են և նրանից ստանում է մի գրքոյկ, որի մէջ գրվում են նրա բերած և մէտս գումարները։ Եթէ հարկաւոր կը լինի փողնետ ստանալ, այն ժամանակ գրքոյկ ունեցողը գալիս է և յայտնում, թէ ով է ինքը և որքան է ցանկանում ստանալ, և անմիջապէս ստանալով իւր փողը, ստանում է և գրքոյկ մնացած փողի համար։ Բայց եթէ անգրագէտը մի անգամով հարիւր րուբլուց աւելի է ստանում, այն ժամանակ ստանալու համար նա պէտք է իւր հետ բերէ և իւր անցագիրը՝ կամ վկայագիրը։

***

Խնայողական գանձարան փող սբերող մի անձից ամեն անգամ բնդունվում է ոչ պակաս 25 կոպէկից և ոչ էլ աւելի 50 րուբլուց։ Իսկ բնդամենն գանձարանում մի մարդ կարող է միայն մինչև 1000 րուբլի ունենալ, որովհետև առ հասարակ խոշոր գումարներով կարելի է ձեռք բերել պետական տոկասաթղթեր (թղթեր։ Իրաքանչիւր ոք, որ գանձարանում կունենայ 50—100 ր., կարող է գանձարանին յանձնարարել, որ իրեն համար տոկոսաթղթեր (որոնք չեն շռւած են տորև), որոնք աւելի տոկոս են բերում, քան խնայողական գանձարանի փողերը։

Մի մարդի անունով մի գրքոյկից աւելի չէ տրվում, որի մէջ 1000 ր. գումարուելուց յետոյ, տոկոսն այլ ևս չէ հաշուում, այլ դրամագլուխը պահվում է միայն։

Գանձարան մտցրած գումարին տարեկան վճարում են 4 տոկոս 100-ին (կամ րուբլուն 4 կոպէկ, իսկ 25 կոպէկին ¼ կոպէկ)։ Այդ տոկոսները հաշվում են ամեն մի ամբողջ ամիս, այսինքն սկսած ամսի մէկից մինչև միւս ամսի 1-ը, իսկ տոկոսներն էլ նոյնպէս տոկոս են բերում։

Ինչպէս ասած է, առաջին անգամ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՆԿԱՐԿ *)

(Շար. տե՛ս նախորդ համարը)

Ա. Ա. Ա.

բևալով, գիւղացիները շատ օգնուած և խրախուսուած են մանաւանդ մի քանիսի աջողութեամբ և յոյս կայ, որ առաջիկայ տարին շատերը կը հետևին իտալական սեմ պահելու, քան տեղական: Ժապոնին, որ շատ քիչ է վարձատրում գիւղացու աշխատութիւնը։

Կ. Կ. Մելիք-Շահնազար.

Թիֆլիս։

ԵՆԱՑԻՑ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼ *)

(Տպաւորութիւններ)

VI

Բուդա-Պեշտից կ. Պօլիս։

Գանի որ Բուդա-Պեշտ չէի հասել, սպասում էի, որ մի սովորական քաղաք պէտք է մանէի, որ իրեւ մայրաքաղաք **) մի քիչ մեծ ու չքեղ պէտք է լինէր։ Բայց երբ մենք նաւահանգստին մօտեցանք ու ես գետի աջ ու ձախ ափերում տեսայ մեծադիզ ու չքեղ տները, պանծալի կամուրջը, պատկառելի գործարանները, բազմաթիւ շոգենաւերը, առագաստաւոր նաւերը, մակոյկները, ջրի և ցամաքի վրայ եռացող կեանքը, այն ժամանակ զգացի, որ ունգարացիների հպարտանալն անհիմն չէ եղել։ Թէև սրանց թանգարանները համեմատաբար դեռ պատանեկան հասակի մէջ են գտնւում, գիտնականները դեռ նոր են անյայտութիւնից դուրս գալիս, բայց և այնպէս երևում է, որ այս ժողովուրդն արթնանում է և առաջ է գնում։ Նայելով այս ժողովրդեան հաստատակամութեանն ու ընդունակութեանը՝ նա այսօր անհամեմատ բարձր կուլտուրական դիրք կունենար արևելքում, եթէ նրա օյժերը կապկպուած չլինէին արտաքին քաղաքականութեան շղթաներով և ներքին քաղաքանութեան ծանր հոգսերով։ Բանը նրանումն է, որ ունգարական թագաւորութեան մէջ սլաւոնական և ըօմանական ցեղերը միասին սակաւ չեն ունգարական տարրից և նրանք էլ կամենում են իրենց լեզուն և ազգային առանձնայատկութիւնները պաշտպանել։ Ահա օրանից է առաջանում և ամրողջ Աւստրիա-Ունգարիայի Թուլութիւնը։ Ինչպէս վէննան մրցում է Բերլինի հետ, այնպէս էլ Բուդա-Պեշտը առաջինի, և ափսոս է ասել, որ չնորհիւ այս ախրութեան ապակեդրնացման՝ ունգարացիների մայրաքաղաքին աջողուեց շատ քաները խլել աւստրիացիների վէննայից։ Ունգարիայի փառասիրութիւնն այն աստիճանի հասաւ, որ գրաֆ Անդրաշեան Բուդա-Պեշտում հրաւիրեց քաղաքի մեծատուններին և օրանց հետ խորհրդակցելով՝ մի երկար Անդրաշեան փողոցի հիմքը դրին, որի մի ծայրից մեւսը սկսեց 10—15 տարիներում այնպիսի փարթամ ապարաններ չինել, որ այսօր չգիտես թէ որին աչերի առաւելութիւն տաս։ Այս շինութիւնները դեռ չարունակվում են և նրանց հետևում են միւս փողոցները։ Ի հարկ է այս մայրաքաղաքում դեռ ևս այն կեանքն ու չարժումը չկայ, ինչ որ վէննայում կամ մինչև անգամ Լայպցիգում է տեսնվում, բայց և այնպէս, եթէ ապագայում ունգարացիները իրենց դիրքը պաշտպանեն, Բուդա-Պեշտին մեծ ապագայ է սպասում։ Ես քաղաք հասայ միայնակ և որովհետև տեղական լեզուն չգիտէի, հայրենակցիս բնակարանի մասին գերմաներէն հարցրի։ Պէտք է գիտենալ, որ ունգարացիները վերին աստիճանի նախանձախնդիր են իրենց մայրենի լեզուին. երբ մէկը նրանց հետ օտար լեզուով է խօսում, մի քիչ կանգ են առնում և միայն այն ժամանակ են գերմաներէն պատասխանում, երբ տեսնում են, որ խօսակիցն օտար է և իրենց լեզուն չգիտենալուցն է, որ չէ խօսում։ Ես ոտիկանների և վերջը մի գործատորի օգնութեամբ հեշտութեամբ հայրենակցիս բնակարանը գտայ և գունապանի կնոջը բարեկամիս անունը տալով՝ սենեակը մտայ և հանգստացայ։ Ներս եկաւ աղախինը, բայց թէև ունգարացի ընկերներս մի քանի խօսքեր ինձ սովորեցրել էին, աւելի լաւ համարեցի այս անգամ այդքան վաստոդով գործ չը լծնել. տեսայ որ ոչ աղախինն է ինձանից բան հասկանում և ոչ էլ ես նրանից, ուստի լաւագոյն համարեցի մինչև ընկերս գալը քնել, որ ոչօք ինձ չսթափէ ունգարերէն խօսել։ Այսպէս վատ բան է, երբ մարդ մի երկիր է գալիս, առանց նրա լեզուն գիտնալու. ես իսկոյն մտաբերեցի գերմանիայում անցրածս առաջին օրերը։

Սրահատակէտ ունգարացիներն չմոռանալով իրենց ազատութիւնն և ազգայնվերածնութիւնն առաջնորդներին, իրենց գեղեցիկ հրապարակներում համեմատաբար շատ արձաններ են կանգնեցրել։ Մարդս հրճուանքով է տեսնում փոքրիկ ազգութիւնների վերածնութիւնը, որոնք իրենց հայրենիքի հողի մէջ են որոնում ու գըտնում ազգային մտաւոր և քաղաքական կեանքի բազմաբոյրղոջ արմատները, բայց և այնպէս ցաւում է ականատեսը, որ այսօր այդպիսի ժողովրդներից մէկը, ունգարացիները, իրենց սատրապեալ սլաւոնական, գերմանական և ըօմանական ցեղերի վերացուցման մէջ են որոնում իրենց ապագայ հաստատութիւնը։ Ցաւալի է, վասն զի այդ ազգութիւններից իւրաքանչիւրն այսօր նոյնքան ապրելու արժանի է, որքան ունգարականը, ուստի ըղձալի պէտք է լինի այն օրը, երբ Թէ աւստրիական և Թէ ունգարական ազգութիւնները միմեանց արժանաւորութիւններն ու իրաւունքները ճանաչելով՝ իրրև միացեալ նահանգներ հեռք ձեռքի տուած առաջ կը մղեն քաղաքակրթութեան ազնիւ գործը։ Այս է Աւստրիայի իդէալը։

Ց. Էջը Մերաք.

(Կը շարունակուի)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Հանգուցեալ ուսուցչիս իմ տարաբաղդ ամուսին Աւետիք Գուլլակեանցը երկար տարիներ ուսուցչութեամբ պարապել է Հաւլաբարի ս. Մարիամեան օրիորդաց ուսումնարանում, չնչին վարձատրութեամբ, իսկ երբ որ ուսումնարանի նիւթական միջոցները բաւարարութիւն չէր տալիս ուսումնարանական այլ և այլ ծախսերին, այն ժամանակ նա իւր սրտակից ընկերների հետ Թիֆլիսի փողոցներն էր չափչփում, հարուստների դռները բաղխելով, մուրացկանութեամբ փող էր ժողովում, որով ուսումնարանը փակուելու վտանգից ազատում էր։ Ասածներիս ճշմարտութեանը կարող են վկայել նրանք, որոնք նոյն գալրօսում նրա հետ ուսուցչական պաշտօն էին վարում։ Սակայն վաղամեռիկ ամուսինս Թօքախտով կնքելով իւր մահկանացու կեանքը, այսօր նուաստիս իմ երեքամեայ Անահիտ դստերս հետ վերջին Թշուառութեան մէջ ձգեց. Թշուառութիւն՝ որ մահու չափ անտանելի է մի Թոյլ էակի համար։

Ցիշեալ ուսումնարանի հոգաբարձութեան վրայ ամուսնոյս ստացած առ այժմ մնում է ապառիկ 30 րուբլի, որի համար քանիցս անգամ բերանացի խնդրել եմ, իսկ յարգելի հոգաբարձութիւնը մինչ յուսատրում էր Թէ՝ «մի փոքր համբերեցէք, անպատճառ դուք կ'ստանաք ձեզ հասանելի փողը»։ Այս խօսքերը շատ անգամ լսելուց և յոգնելուց յետոյ, ճարահատուած մի խնդրագրով պիտեցի Թիֆլիս գեր. Սրբազան Ատաջնորդին, որպէս զի՝ գթալով իմ տարաբաղդ վիճակի վրայ, կարգադրէ յիշեալ գումարը ստանալու մասին։ Իմ մատուցած խնդրագրիս վրայ Նորին Սրբազնութիւնը իւր իսկական ձեռքով մակագրել է հետևեալը. «Եթէ պարտքն դպրոցին է, վճարեսցէ Հոգաբարձութիւն նորին, ի բաւարարութիւն խնդրատուին»։

Սակայն այս խօսքերն էլ ոչինչ ապդեցութիւն չունեցան յիշեալ ուսումնարանի հոգաբարձութեան վրայ, և ես յուսահատած գնում եմ հայ մտաւորական արգարադատ ձայնին՝ խոնարհաբար խնդրելով, որ պաշտպան հանդիսանալ այն Թոյլ էակին, որ ինքն ըստ ինքեան անզօր է կռուելու մի հոգաբարձութեան դէմ, որը (այրին) գործել չէ կարող և մուրալ ամաչում է։

Ցոյս ունիմ, որ հոգևոր բարձր ծայրագոյն իշխանութիւնը, խղճալով իմ աննախանձելի Թշուառ վիճակի վրայ, մի բաւարար տնօրէնութիւն կանէ։ *)

Վարդուհի Գուլլակեանց

28 յունիսի

Թիֆլիս

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Մեծապատիւ Տէր Խմբագիր. Դժուար է մեզանում նրա դրութիւնը, ով կը ցանկանայ գէթ մի չնչին կարգ ուսում ստանալ, բայց առաւել ևս դժուար է նրա դրութիւնը, ով մեր երկրում եղած մի չնչին կարգ ուսումնարաններում ուսանելու համար միջոց չունի և գաւառացի է։ Այդպիսի մի անտանելի դրութեան մէջ գտնւում եմ և ես, որ 1884 Թուին մտնելով տեղիս «Եղիսաբէթեան» օրիորդական ուսումնարանն անցեալ 1886/7 ուսումնարանական տարում աւարտեցի նոյն ուսումնարանի դասընթացը։ Բայց որովհետև միջոց չէր ներում կրթութիւնս շարունակելու Թիֆլիսի մի չնչին կարգ ուսումնարանական հաստատութիւններից մինի մէջ, ուստի ստիպուած եղայ կրկին մի տարի մնալ նոյն ուսումնարանում՝ որպէս ազատ յաճախող։

Այժմ, Խմբագիր Տէր, դիմելով ձեզ, խնդրում եմ իմ սոյն երկտողիս տեղ տաք ձեր պատուական «Նոր-Դար»-ի մէջ, որ կարդալով գոնէ գտնուին մարդիկ, որոնք ցանկանային որդեգրել տալ ինձ Թիֆլիսի մի չնչին կարգ ուսումնարաններից մինում և կամ միջոց կտային ինձ յաճախել այդ ուսումնարաններից մինն ու մինը, որով յաւիտեան կը պարտաւորեցնէիք ինձ՝ յաղորդ տալով ուսման ծարաւիս, որին այնքան փափագում եմ։

Օր. Մարիամ Այվազեան

Ախալցխա

22 յունիսի.

*) Ահա ձեզ մի պատուական ուսուցչի և ճշմարիտ ազնիւ երիտասարդի իւր մահից յետոյ Թողած այրին և մինակ դստեր վիճակը։ Սպասում ենք, որ Հաւլաբարի Մարիամեան դպրոցի յարգելի հոգաբարձութիւնը կը վճարէ նամակի մէջ յիշեալ չնչին պարտքը, սպասում ենք, որ այն անձերը, որոնք հանգուցեալ Աւետիք Գուլլակեանցի բարերարութիւնից օգտուել են և նրանից փոքրիկ գումարներով պարտք են վերցրել, կը վճարեն նրա Թշուառ այրուն իրենց պարտքը... չատ ցաւալի է իմանալ և տեսնել վաղամեռ Աւետիք Գուլլակեանցի պէս բարի և ազնիւ ուսուցչի այրուն և միակ ազգական ողբալի գրութեան մէջ։ Խմբ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՇԿԻՒԱՆԴ, 21 յունիսի.—Անգլօ-կովկասեան երկաթուղու Զագամ կայարանից դէպի արևմուտք (տափարակ դաշտի վրայ) գտնւում է Բաշքեանդը։ Բաշքեանդ բառը Թուրքերէն է, որ կը նշանակէ «գլուխ գիւղ», այսպէս է կոչուել բոլոր հայաբնակ գիւղերից բարձր և հեռու լինելուն համար։ Գիւղը շրջապատուած է մահականների և Թուրքերի գիւղերով։ Հողը ժողովրդի քանակութեան նայելով՝ սակաւ է. բայց երկրագործութեան և անասնապահութեան համար յարմար է։ Տեղի սղութեանը նայելով և ստացած բերքերին, սոյն գիւղացիներին հացով առատ, իսկ անասուններով բազմաթիւ առաջնակարգ ժողովուրդներից մէկը կարելի է համարել Շամշադինի գաւառում։ Ջուրը առատ է, բայց սակաւ, օդը Թարմ, տեղը սար, ամառը հով, ձմեռը բաւական։ Անտառից չատ հեռու են, բայց իրենց ժիր աշխատանքով՝ փայտի կողմից էլ պակասութիւն չեն զգում։ Գիւղը գտնւում է մերձակայ Թուրքերի սար քաշելու և սարից վերադառնալու ճանապարհի վրայ. այն վնասները, որ պատճառում են Թուրքերը միւս հայաբնակ գիւղերին, այստեղ չեն կարողանում տալ, սոյն ժողովրդի միակամութեան, արհաստըրտութեան և մխիթարից հետ ունեցած սիրոյ պատճառով։ Սոյն գիւղացիները աշխատասէր են, հիւրասէր և ընդհանրութեամբ գործող. պարապում են նահապետական կերպով՝ երկրագործութեամբ, անասնապահութեամբ և մասամբ մեղուապահութեամբ։ Երկրագործութիւնից ստանում են ցորեն, գարի, հաճար, կորեկ, գետնախնձոր, կազամբ և այլն։

Գիւղը հիմնուած է 1852 Թուին. գաղթել են Ներքին Զորաթաղից՝ և պատկանում է Մելիք-Գալանթարեանների. ունի 120 տուն բնակիչ, բոլորն էլ հայադաւանները են, ուսումնարան չկայ. ունեն երկու եկեղեցի՝ մէկը հին՝ սուրբ Յովհաննէս անուանով և 1857 Թուին նորոգուած, իսկ այժմ անգործածելի։ Այս եկեղեցու պատերում կան հին գերեզմանաքարեր և խաչեր, որոնցից շատերը կոտրատուած են և նրանց վրայ եղած արձանագրութիւնները էլ փչացած։ Միայն երկու խաչի վրայ կար հետևեալ արձանագրութիւնը. «Սուրբ խաչս բարեխօս Սհակի կին Եղիսաբէթին»։

«Ես Թամանս կանգնեցի սուրբ խաչս բարեխօս, որդոյ իմոյ Նաւասարդին. Թ. Ռ. որք ընթեռնուք յաղաւթս յիշեցէք»։ Նոր եկեղեցին սուրբ Մինաս անունով զինուած է 1872-ին. եկեղեցին բաւական բարձր է, տանիքը կըրամիտած և համեմատելով միւս գիւղերի եկեղեցիների հետ հնանալի կերպով զարդարուած է զարդերով։

Եկեղեցու հարաւային խորանում դրած էր մէկ քառաքուսի քար հետևեալ արձանագրութեամբ. «Յանուն Աստուծոյ, ես Դաւիթ կանգնեցի զխաչս այս ի բարեխօսութիւնդ տէր իմոյ որդ Անտիկին Թուին ՉԼԷ», իսկ հիւսիսային խորանում՝ հին յաւմաւուրք։ Գիւղում կայ երեք ծխատէր քահանայ, որոնք արժանի են գովասանքի իրենց կատարած անխափան ժամերգութիւնների համար։ Տէր Դաւիթ Նադիսեանը ծերութիւնից կուրացել է, իսկ գիւղը հովւում են միւս երկու քահանայ։

Բաշքեանդի շրջակայքում կան չատ աւերակ եկեղեցիներ և գերեզմանները եղծուած արձանագրութիւններով, որոնցից մէկ քանիսը ամբողջութեամբ արտագրեցի։

Ահա արձանագրութիւնները.

«Ես Գորգի երեսս արարի չհատչս սուրբ նշանիս» «Թ. ՈՀԳ. Վրթանիսի է ազաչեմ յաղաւթս յիշեցէք»։

«Ողորմի յիշեցէք՝ Պապին և Նաւասարդին. Թ. ՌՀ և այլն։ Ով որ կարդայ ողորմի ասի՝ Գաբանին, Հայր Մելիք-բէկին, մայր Խաթունին, եղբարք՝ Հայրապետին և Մելիքսէթ քահանային» Թ, ՌՀԳ.

Ց. Գ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԳԵՐՄԱՆԻԱ.—Վերջին ժամանակներս Գերմանիայում ընդհանուր ուշադրութեան առարկան այն խօսակցութիւններն են, որոնք լինում են գերմանական Վիլհելմ II կայսրի անելիք ճանապարհորդութիւնների մասին։ Ասում են, որ Վիլհելմ կայսրը յուլիսի 1-ին պէտք է Պօտսդամից ուղևորի Բերլին, ուր հանդիսաւոր ձայ կը տան և ուր կը հրաւիրուին դիպլօմատական բոլոր ներկայացուցիչները։ Իսկ աշնան կ'ուղևորի Միլան՝ իտալական Հումբերտ Թագաւորին այցելութեան։ Նոյնպէս աշնան պէտք է այցելէ կայսերական գաւառները և հոկտեմբերին կ'հասնի Ստրասբուրգ։ Խօսում են նոյնպէս, որ նա կ'այցելէ և աւստրիա - ունգարական կայսր Ֆրանց-Յօզիֆին, ինչպէս խօսում են, որ երբև Թէ նա մտադիր է այցելելու Պետերբուրգը։

Պէտք է նկատել, որ տեսակցութիւնները պետք լինին ոչ միայն տգքայական տան ներկայացուցիչների մէջ, այլ և կառավարչական շրջանների բարձր պաշտօնեաների մէջ։ Այսպէս օրինակ, Ե. Բիսմարկին կնոջինէն է գնալու, ուր գնալու է նոյնպէս և գրաֆ Կայզերլին, իսկ Կրիսպին ուղևորելու է Կարլսրադ, բայց նախ պետք տեսակցի Վեննայում գրաֆ Կայզերլիի հետ և յետոյ Ե. Բիսմարկի հետ։

ԱՆԳԼԻԱ.—Անցեալները Ծերսնամարդ Գլադստօնը խօսելով իւր բարեկամների հետ հաղորդել է նրանց, որ այժմ իւր կեանքի նպատակն է երգործած տեսնել երկու մեծ խնդիրներ. առաջինը՝ որ կարողանայ բազմաչարչար իրլանդացիներին ազատութիւն չնորհել և երկրորդ՝ ցոյց տալ քրիստոնէական և հոմերական աստուածաբանութեան մէջ եղած ընդհանուր նմանութիւնները։ Եւ իրաւի, Գլադստօնը, չնայելով որ արդէն բաւական ծեր է, բայց եռանդով զբաղվում է իրլանդական խնդրով. նա չէ դադարում մարքիզ Սալսբիւրիի կառավարութեան դէմ անդադար կռուելուց, ինչպէս յայտնի է, մարքիզ Սալսբիւրին իրլանդական խնդրի լուծման համար կարևոր է համարում գործ դնել խիստ միջոցներ։ Անցեալներն Գլադստօնի կուսակից սեր Մօրլէյը պատգամաւորների ժողովին առաջարկեց, որ մարքիզ Սալսբիւրիի կառավարութեան յանդիմանութիւն յայտնեն նրա գործ դրած խիստ միջոցների համար Իրլանդիայի վերաբերմամբ։ Մօրլէյը այդ առթիւ խօսեց մի երկար, լաւ պատճառաբանուած և խիստ զգացուած ճառ։ Նա մեղադրում էր կառավարութեան, որ իբրև Թէ պանազան գրգռիչների ձեռքով կամաւ անկարգութիւններ է առաջացնում երկրի մէջ՝ որպէս զի իրաւունք ունենայ խստութեամբ վերաբերուելու դէպի Իրլանդիան. իսկ Իրլանդիայի համար հրատարակուած օրէնքի խիստ գործադրութեամբ միայն Իրլանդիայի մէջ ծնեցնում են ատելութիւն դէպի Անգլիան և այդպիսով ժողովրդի մէջից վերացվում է դէպի օրէնքն ունեցած սէրն ու յարգանքը։ Ի վերջոյ Մօրլէյն ասաց. «Ես

բողոքում եմ կառավարության կողմ յամառության դեմ իմ սկզբունքների և սովորությունների մեջ, որով Իրլանդիան գաբթեց այն, ինչ որ է այժմ։ Եթէ երկրի գրութիւնն Իրլանդիայում օր օրի վրայ վատանում է, մեզաւորը, իսկապէս ասելով, ոչ թէ Բալֆուրն է, այլ պատգամաւորների ժողովի մեծամասնութիւնը։ Եթէ ժողովի մեծամասնութիւնը համաձայն չէ իմ առաջարկին, թող նեղութիւն կրէ գոնէ ուշադրութեամբ քննելու իրերի դրութիւնն Իրլանդիայում։ Այն ժամանակ, ես հաւատացած եմ, որ նա կը համոզուի, որ Իրլանդիայի վերաբերմամբ կառավարութեան գործ դրած միջոցները և սիստէմը կեզտոտում են պարլամենտի և անգլիական ժողովրդի պատիւն և անունը»։ Ինչպէս յայտնի է, Մօրլէյի առաջարկութիւնը չընդունուեց ձայների մեծամասնութեամբ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

*** Իշ. Բհամարկի յաջորդներից մինը, ամն գօկտոբ-լեզուարան Գօրօտ-կօլ, ձեռնարկել է իշ. Բհամարկի օրացոյցը կազմելու։ Նա հաւաքել է նշանի կեանքի մէջ պատահած բոլոր դէպքերը և նրան դասաւորել է օրացոյցի կարգով։ Այսպէս օրինակ, բանալով յուլիսի 29-ը, մենք կարող ենք տեսնել, թէ իշ. Բհամարկի կեանքի մէջ ինչ է պատահել նրան ամեն տարի 29-ներին։

* * *

Ամերիկուհու ճաշակութիւնը.—Միացեալ Նահանգներում ամեն բանի, նոյն իսկ ամուսնութեան, գործնական ձև են տալիս։ Այսպիսի մի օրինակ պատահեցաւ և մօտերքս Նիւ-Յօրկում։ Իօզէֆ Հանի մրգեղէնի խանութում ուտացուեց մի քանի արկղ ծիրան, որ ուղարկուած էր Կալիֆօրնիայից։ Նրանցից մինի տակ կար հետևեալ տոմսակը. «Եթէ այս նամակը կը կարդայ գեղեցիկ, ջահել երիտասարդ, որ ցանկանալիս կը լինի ամուսնանալ, թող գայ Կալիֆօրնիա։ Այնտեղ ապրում են գեղեցիկ և ջահել աղջիկներ, որոնք պատրաստ են ամուսնանալու։ (Ես էլ նրանցից մինն եմ)։ Սակայն փեսացուն չպէտք է 30 տարեկանից աւելի լինի և լաւ կրթուած։ Եթէ նա ինձ ուղարկէ իւր լուսանկարը, կ'ստանայ և իմը։ Կալիֆօրնիայում աղջկերքը ոչ միայն լաւ բանուորներ են, այլ և շատ լաւ գործողներ առևտրական գործում։ Հասցէն. «Սան-Իօզէ, Կալիֆօրնիա, Ա. Բ. Գ.»։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 յունիսի.—Հրատարակուած է պետական խորհրդի որոշումը տնային արդիւնաբերութիւնն կատարելագործելու և նրան առաջ մղելու համար, նոյնպէս և վերահսկողութիւն նշանակելու համար, երեք տարի ժամանակով 35,000 ր. ծախս նշանակելու մասին։

Հրատարակուած է նոր ձևի 25 րուբլիանոց թղթադրամի նկարագիրը,—թղթադրամը տպուած է սպիտակ թղթի վրայ, որի մէջ մացրած է մետաքսէ բանուածք, նկարը երեսի կողմից կապոյտ ներկով է տպած բացարմատ գոյն ֆօնի վրայ, իսկ հակառակ կողմը տպուած է մանիշակի գոյնով՝ վարդագոյն ֆօնի վրայ. մէջ տեղում կայ մի մեդալիօն՝ պետական նշանով։

ՎԵՆՆԱ.—Նատալիա թագուհին մերժից իրեն եղած առաջարկութիւնները, ուստի սինոդը իրեն իրաւացի համարելով և առանց լետաձգելու կ'որոշէ ամուսնութեան խզումը։ Յոյս ունին, որ թագուհին կ'մտածէ և կ'ընդունէ իրեն առաջարկուած համաձայնութիւնը։ Թագաւորը պատրաստակամութիւն է յայտնում ամեն տարի վճարել 300,000-ական ֆրանկ և թագաժառանգին նրա մօտ թողնել մինչև 1892 թիւը, միայն թագուհին պէտք է պարտաւորուի Բելգրադ չգալ։ Եթէ նա կ'համաձայնի այդ պայմաններին, այն ժամանակ թագաւորը ևս կառնէ ապահարզանի մասին իւր տուած յայտարարութիւնը։

ԴԱՐՄՇՏԱԴՏ.—Բատեմբէրգեան պրինց Ալէքսանդրն ընկնելու միջոցին վնասեց իւր մէջքի ողնաշարը։

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 29 յունիսի.—Տեղիս բօրսային յանձնաժողովն որոշեց.—բօրսան, Ռուսիայի 900 ամեակի տօնախմբութեան օրը փակել, որ ուրբաթ օր է գալիս, իսկ կուբսի օրը փոխել յուլիսի 14-ին։ Բօւսային տան մէջ, յուլիսի 15-ին կ'կատարուի մաղթանք։

«Гражд.»-ը հաւատի ապբիւրից լսել է, որ սերբիական Նատալիա թագուհին մտադիր է Ռուսիա տեղափոխուելու։

ՊԱՐԻԶ.—Պատգամաւորների ժողովին ներկայացրած է Ներբուրգի, Բրէստի և Տուլօնի նաւահանգիստների պաշտպանութեան օրինագիծը, նոյնպէս և նաւահանգիստների բէյդերի ապահովութեան մասին։ Ծովային մինիստրը պահանջեց, որ օրինագիծն անյետաձգելի համարուի։ Սենատն ընդունեց բանակը լրացնելու օրինագիծը, որով իսկական ծառայութեան ժամանակամիջոցը երեք տարի է նշանակվում, իսկ պահեստում հաշվում է 6½ տարի։

ՎԵՆՆԱ.—Սերբիական թագուհին գերմանական կառավարութեան խօսք տուեց Վիսբադէնից չհեռանալ, մինչև որ նրա գործը չվերջանայ։ Թագուհու վրայ նշանակուած է օստիկանական լուռ հսկողութիւն։ Վիսբադէնի օստիկանութեան կառավարիչը երեկ թագուհուց անձամբ տեղեկացաւ, թէ արդեօք նա կամենում է թագաժառանգին չանձնել գեներալ Պրօտիչին. թագուհին վճռաբար մերժեց այդ։ Բիսմարկը հրամայեց թագուհուն յայտարարել, որ գերմանական օրէնքներով, Սերբիայի թագաժառանգը պէտք է յանձնուի Միլան թագաւորի կողմից ուղարկուած անձին։ Սերբիական գահաժառանգի վրայ խիստ հսկողութիւն է նշանակուած. վախենում են, որ նրան չյափշտակեն, որովհետև Վիսբադէնում երևացել են մի ինչ-որ կասկածելի մարդիկ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 յունիսի.—«Новое Время» լրագիրը հաղորդում է, որ պետական բանկը իւր բաժիններում սկսում է կոմմիսիոնական գործառութիւններ երկաթուղու կվիտանցիաների ընդունելով այն քաղաքներում ուր արկուելիք ապրանքների վերաբերութեամբ, ուր գտնվում են պետական բանկի կանտօրներ կամ բաժիններ։

Երեկ վախճանուեցաւ տպագրական գործի գլխաւոր վարչութեան երբեմն կառավարիչ՝ սենատօր Պաւէլ Պետրովիչ Վեագէմսկին։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

28 Յունիսի։

Լօնդօն 105,25 ր., 104,50 ր., 105, ր.
Համբուրգ 51,60 ր., 51,60 ր.
Պարիզ 41,50 ր., 41,35 ր.
Պօլուիմպերիալ . 8 ր. 40 կ. սակ.
Մաքս. կուպօն 167 ր. 75 կ. սակ.
Արծաթ . . . . 1 ր. 33 կ. սակ.
Բօրսային դիս. 6 և 7¼%
Պետական. բանկի 5% տոմս.
1-ին շրջանի. . 98 ր. 75 կ. գն.
2-րդ . . . . . 98 ր. 75 կ. սակ.
3-րդ . . . . . 98 ր. 25 կ. գն.
4-րդ . . . . . 98 ր. 87 կ. սակ.
5-րդ . . . . . 98 ր. 12 կ. գն.
6-րդ . . . . . — ր. — կ. սակ.
Վերջին 4% . 82 ր. 37 կ. գն.
փոխառութիւնը
100 և 1000 արեւելեան փոխառութեան 5% տոմսեր,
1-ին շրջանի . 99 ր. 50 կ. գն.
2-րդ . . . . . 98 ր. 62 կ. գն.
3-րդ . . . . . 98 ր. 87 կ. սակ.
Առաջին 5% ներքին փոխառութեան
տոմսեր . . . 272 ր. 50 կ. սակ.
2-րդ . . . . . 249 ր. 75 կ. սակ.
5½% ըվճառը . 101 ր. — կ. գն.
Ոսկէ ըվճառ . . 185 ր. 25 կ. սակ.
Թեֆ. քաղ. վարկի ընկերք.
օբլիգ. . . . . — ր. — կ. ծ.
Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը կադաղ է։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

Ղզլ-Աբվադում տարածուած վատ սովորութեան մասին ձեր հաղորդած լուրի մասին չենք կասկածում, ինչպէս չենք կասկածում և այն մասին, թէ այդ անտուղ վարձակալածների մասին խօսելով, դուք աչքի առաջ ունէիք մասնաւոր մի քանի անձեր, բայց հակառակ կողմին էլ տեղ տուինք լրագրի մէջ՝ որպէս զի եթէ կարող են արդարացնել իրենց։ Շարունակեցէք ճշգրիտ լուրեր հաղորդել։

Խմբագիր-հրատարակիչ

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որ աւարտել է Ներսիսեան դպրանոցում, կամենում է գաւառներ գնալ ուսուցչութեան պաշտօնով։ Դասախօսում է Հայոց լեզուով աւանդուող առարկաները. բացի այդ աջողակ կերպով պատրաստում է երգեցիկ խումբ։ Հասցէն. Тифлисъ, Левону Меликъ-Адамянцу, Большая Грязная ул., д. № 17. յանձնել Պ. Վ.-ին։

6—3

ՄԻ ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉ, որ գաստխօսել է Հայոց մի քանի կարգ ուսումնարաններում և ունի Ս. Էջմիածնի ձեմարանի մշտնապիը (դիպլօմ), ցանկանում է ուսուցչական պաշտօն վարել Հայոց ուսումնարաններում։ Դասախօսում է Հայոց լեզուով աւանդուող բոլոր առարկաներից։

Հասցէն «Նոր-Դար»-ի խմբագրատունն։

(Խ.) 8—5

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Ցանկանում են ձեռք բերել պարսկական արդէն գործածած ՊՕՍՏԱՅԻՆ ՆԱՄԱԿԻ ՄԱՐԿԱՆԵՐ, նոյնպէս ցանկանում են ձեռք բերել, եթէ միայն կարելի է, ԱՒԱՆՍՏԱՆԻ և ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԸՆԴԻԿ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ գործածած, մանաւանդ աւելի հին ժամանակից մնացած դամքի տարբերներ։ Այս մասին թող դիմեն Թիֆլիս՝ «Նոր-Դար»-ի խմբագրութեանը, Тифлисъ. въ Редакцію газеты «Норъ-Даръ» կամ (Caucase) Tiflis. Rédaction du journal «Nor-Dar»։

Խմբագրութեանը դիմողները եթէ կամենում են թող յայտնեն թէ որքան վարձատրութիւն են պահանջում։

6—5

ПАРФЮМЕРІЯ
ВЫСШАГО КАЧЕСТВА.
А. СІУ и К°
МОСКВА.
НАХОДИТСЯ ВО ВСѢХЪ ГОРОДАХЪ РОССІИ.

(М.) 50—7

BATEAUX A VAPEUR FRANÇAIS A. PAQUET ET Cie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ եւ Ը՝ՆԿ.

Ուղիղ և կանոնաւոր երթևեկութիւն Մարսէլի և Բաթումի մէջ։

Հինգշաբթի, յուլիսի 4-ին, «ԳԱԼԼԻԱ» (La Gaule) շոգենաւը, նաւապետ ԳԱՐՐԻԳ (Garrigues) գուբս կը գայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսօն, Կ. Պօլիս և Մարսէլլ։

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան գործակալութեան Բաթումում՝ պ. ԳԱՐԱՆԻՕՆԻՆ, Թիֆլիսում՝ պ. ԲԷՆՕԻՆ, նախկին դալերէյա Ա.ծծրուհների № 103.

3—3

Խանքենդ աւանի թերի մնացած եկեղեցու համար նուէրներ է խնդրվում. իւրաքանչիւր անհատ իւր սրտաբուղխ նուէրը կարող և ուղարկել հետևեալ հասցէով. Черезъ Шушу въ Ханкенды. Ктитору Аракелу Мелькумянцу

Երէցփոխ-Սահակել Մելքումեանց։

3—3

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որ աւարտել է Ս. Էջմիածնի ձեմարանն և թեմական դպրանոցներում վարել է ուսուցչութեան պաշտօն, ցան կանում է մասնաւոր դասեր ունենալ ամառնային արձակուրդի ամիսներում։ Աշակերտներին պատրաստում է միջնակարգ դպրոցների համար։ Յանկացողները թող դիմեն «Նոր-Դար»-ի խմբագրատունը։

(Ա.) 10—5

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ ցանկանում է Հայոց եկեղեցական-ծխական ուսումնարաններում ունենալ դասեր ռուսաց լեզուից, թուաբանութիւնից և ձեռագործից՝ բոլոր դասարաններում։ Հասցէն և պայմանների մասին դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան։

(Ա.) 10—9

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ, որ մի քանի տարի ուսուցչութեան պաշտօն է վարել Հայոց ուսումնարաններում, ցանկանում է դասախօսել թուաբանութիւնից, ռուսաց լեզուից, ձեռագործից՝ բոլոր դասարաններում և Հայոց լեզուից՝ ա. դասարանում։ Հասցէն իմանալ «Նոր-Դար»-ի խմբագրատանը։

(Ր.) 10—9

Խոնարհաբար խնդրում եմ այն յարգելի անձերին, որոնք իմ հանգուցեալ ամուսին Աղէքսանդր Աբարատեանի

«ԳԱԻԱՌԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ»

Գրքի համար բաժանորդներ գտնելու նեղութիւնը յանձն էին առել, բարեհաճեն ուղարկել ինձ բաժանորդագրութիւնները և գրամը, որպէս զի կարող լինենք տպագրելու բաժանորդների ազգանունները, որովհետև տրդէն տպագրութիւնն աւարտվում է։

Հասցէ՝ Тифлисъ, Шушаникъ Араратяну. Ѳоминая ул. № 15, д. Давришева.

(Ա.) 5—5

Дозволено цензурою. Тифлисъ, 30-го Іюня 1888 г.

Տպարան Լ. Գ. Կրամարէնկոյի

Типографія Л. Г. Крамаренко, Гол пр., д. Читахова